ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 18.11.2014 թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս. Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ Խ. Վարդանյանը, Գ.Շահինյանը, Ս.Հակոբյանը, Ս.Աղաբեկյանը, Գ.Քալանթարյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հարությունյանը, Դ.Սիմոնյանը, Կ.Պառավյանը, Հ.Մովսիսյանը, Ա.Օհանյանը, Վ.Դոխոյանը, Ա.Փելեշյանը, Ա.Մատինյանը, Ա.Գրիգորյանը, Ս.Ղամբարյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Ա. Այվազյանը, Վ. Դավիթավյանը, Ա. Ափինյանը:

Նիստին մասնակցում էին նաև Ն.Սարդարյանը, Գ.Սիմոնյանը, Է.Հովսեփյանը, Ա. Սուքիասյանը, Տ. Պապանյանը, Գ. Մացակյանը, Ա. Իսպիրյանը, Գ.Բադյանը, Է.Գևորգյանը, Ս. Կարապետյանը, Գ.Պառավյանը, Մ.Գալստյանը, Է. Արզումանյանը, Ա.Վերանյանը, Լ.Ստեփանյանը, Տ.Գրիգորյանը, ԶԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, անհատ քաղաքացիներ:

Նիստին մասնակցում և հրավիրված էին Քաղաքաշինության նախարության աշխատակազմի քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչության պետ Ս. Մաթևոսյանը, «Հայնախագիծ» ԲԲԸ ներկայացուցիչներ Ն.Պետրոսյանը և Շ.Պետրոսյանը, Անշարժ գույքի կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչ Մ. Մանուկյանը, Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանը:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց ժամը 11.15-ին

Այնուհետ Ս. Դարբինյանը ներկայացրեց նիստի օրակարգը:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. Վանաձորի համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին
   զեկ.՝ Տ.Պապանյան, Ն.Պետրոսյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
   զեկ.՝ Է.Գևորգյան
3. Վանաձորի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին
   զեկ.՝ Ա.Սուքիասյան
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին
   զեկ.՝ Ա.Իսպիրյան
5. Վանաձորի քաղաքապետարանի «Նեցուկ ՀԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին
   զեկ.՝ Լ.Մելիքյան
6. «Վանաձորի թիվ 24 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին
   զեկ.՝ Գ.Բադյան

7. Վանաձորի համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 10-ի թիվ 25 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

8. Համայնքի ղեկավարի 2014թ. հոկտեմբերի 14-ի ««Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 2190-ա որոշումը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

9. Վանաձորի քաղաքապետի և «Կառավար-Դան» ՍՊԸ-ի միջեվ կնքված 01.02.2009թ. թիվ 8 և թիվ 9 պայմանագրերը, 01.08.2009թ. թիվ 311 /պայմանագիրը լրացնելու մասին/ համաձայնագիրը, 01.02.2009թ. թիվ 1-Ն համայնքային ներդրման պայմանագիրը լուծարելու, «Կառավար-Դան» ՍՊԸ-ի այգու վարձակալության 01.07.2014թ. դրությամբ 3327950 /երեք միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր հիսուն / ՀՀ դրամ պարտքը մարելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

10. «Արարատ Հովհաննիսյանին, Գառնիկ Ներսեսյանին և Արշակ Ռամազյանին տարածք օտարելու մասին» զեկ.՝ Ա.Իսպիրյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին

զեկ.՝ Տ.Պապանյան, Ն.Պետրոսյան

Հարցի քննարկման ընթացքում «Հայնախագիծ» ԲԲԸ – ներկայացուցիչ Ն .Պետրոսյանին գլխավոր հատակագծի հեռանկարային առաջարկների, վթարային շենքերի հետագա ճակատագրի, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիների, տրանսպորտային հանգույցների, և հատակագծի մեջ հետագայում փոփխություն կատարելու իրավական կարգի մասին հարցեր ուղղեցին ավագանու անդամներ Խ. Վարդանյանը, Ա. Օհանյանը, Ա. Մատինյանը, Գ Քալանթարյանը, Ա. Գրիգորյանը

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին զեկուցողի և քաղաքապետի կողմից:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

2. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ.՝ Է.Գևորգյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ զեկուցողի կողմից:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ, կողմ՝ 14, դեմ ՝ 2 (Ա. Մատինյան, Կ. Պառավյան), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին

զեկ.՝ Ա.Սուքիասյան

Զեկուցումից հետո ավագանու անդամ Ս.Ղամբարյանը պատասխանեց և պարզաբանումներ տվեց ավագանու նիստին ներկա ՀԿ-անդամների հայտարարության վերաբերյալ, որն առնչվում էր բյուջեի հանրային բաց լսումներին և իր կողմից ներկայացված առաջարկություններին: Գ. Շահինյանի կողմից առաջարկվեց բյուջեում ներառել քաղաքի այգիների լուսավորության վերականգնման հարցը: Քաղաքապետը տեղեկացրեց, որ դրանք կարելի է իրականացնել բյուջեով նախատեսված այգիների լուսավորության վերականգնման նպատակով հատկացված ֆինանսական միջոցների հաշվին, մինչև 1 մլն դրամի շրջանակներում և տրվեց համապատասխան հանձնարական: Գ. Քալանթարյանն առաջարկեց ԶԼՄ-ներին և ՀԿ-ներին գյուջեից ամենամյա հատկացումներ իրականացնել ավագանու կողմից ընդունելի կանոնակարգով և ծահառուների կողմից նախապես նարկայացված ծրագրերին համապատասխան,ինչպես նաև պարտադիր իրականացնել մոնիտորինգ հատկացված միջոցների ծախսերի արդյունավետության նկատմամբ: Հնչեցին նաև հարցեր հուշարձանների պահպանման, 2015 թ. բյուջեի և համայնքի զարգացման քառամյան ծրագրչի հետ համադրության, քաղաքի ենթակառույցների զարգացման վերաբերյալ Խ. Վարդանյանի, Ա. Խաչատրյանի կողմից: Ավագանու միաձայն համաձայնությամբ վարողը ելույթի հնարավորություն տվեց նաև նիստին ներկա երիտասարդական ՀԿ-ի ղեկավար Մենուա Բրուտյանին:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում և այդ ընթացքում բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ զեկուցողի կողմից:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ, կողմ՝ 14 դեմ՝ 1 (Ա. Խաչատրյան), ձեռնպահ՝ 1 (Ա. Մատինյան), ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Խ.Վարդայանն առաջարկեց նախագծի հավելվածի 14-րդ կետում նախատեսված վարձավճարների սահմանները նշել 0-ից սկսած, որպեսզի բարեգործական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ազատվեն վարձավճարներից: Առաջարկն ընդունվեց:
Տեղի ունեցավ մտքերի փոխանակում և այդ ընթացքում բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ զեկուցողի կողմից:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

5. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի քաղաքապետարանի «Նեցուկ ՀՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Լ.Մելիքյան

Գ.Քալանթարյանն առաջարկեց հաջորդ ավագանու նիստում լսել Նեցուկ ՀՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության վերաբերյալ

հաշվետվություն: Զեկուցողի կողմից ներկայացվեց Հայկ Համբարձումյանը, որպես տնօրենի թեկնածու:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

6. ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի թիվ 24 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Գ.Բադյան

Քաղաքապետի և քաղաքապետարանի կողմից իրականացվող կադրային քաղաքականության վերաբերյալ պարզաբանում խնդրեց Ա. Խաչատրյանը: Քաղաքապետի կողմից տրվեց անհրաժեշտ պարզաբանում:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ , կողմ՝ 15, դեմ՝ 1 (Ա. Խաչատրյան) ,ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 10-ի թիվ 25 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ , կողմ՝ 16, դեմ՝ 0 ,ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

8. ԼՍԵՑԻՆ - Համայնքի ղեկավարի 2014թ. հոկտեմբերի 14-ի ««Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 2190-ա որոշումը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ , կողմ՝ 16, դեմ՝ 0 ,ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

9. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի քաղաքապետի և «Կառավար-Դան» ՍՊԸ-ի միջև կնքված 01.02.2009թ. թիվ 8 և թիվ 9 պայմանագրերը, 01.08.2009թ. թիվ 311 /պայմանագիրը լրացնելու մասին/ համաձայնագիրը, 01.02.2009թ. թիվ 1-Ն համայնքային ներդրման պայմանագիրը լուծարելու, «Կառավար-Դան» ՍՊԸ-ի այգու վարձակալության 01.07.2014թ. դրությամբ 3327950 /երեք միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր հիսուն / ՀՀ դրամ պարտքը մարելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Նիստից բացակայեցին ավագանու անդամ Ա. Փելեշյանը և Ս. Հակոբյանը:
Կայացավ մտքերի փոխանակում:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվերակությամբ , կողմ՝ 12, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 2 (Գ. Քալանթարյան, Ս. Ղամբարյան) ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

10. ԼՍԵՑԻՆ - Արարատ Հովհաննիսյանին, Գառնիկ Ներսեսյանին և Արշակ Ռամազյանին տարածք օտարելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Կայացավ մտքերի փոխանակում:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ , կողմ՝ 0, դեմ՝ 15 , որոշում չընդունվեց:

Նիստին ներկա ավագանու անդաները միաձայն առաջարկեցին ներկացանել որոշման նոր նախագիծ, տարածքը նվիրատվությամբ հատկացնելու վերաբերյալ:
Վարողը խնդրեց 15 րոպե ժամանակ նոր նախագիծ հեղինակելու և ներկայացնելու համար:
Ավագանին միաձյան համաձայնեց առաջարկին: Հայտարարվեց 15 րոպե ընդմիջում :

Նիստը վերսկսվեց և՝
ԼՍԵՑԻՆ - Արարատ Հովհաննիսյանին, Գառնիկ Ներսեսյանին և Արշակ Ռամազյանին տարածք նվիրելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Քվերակությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 2 (Գ. Քալանթարյան, Ս. Ղամբարյան) ընդունվեց որոշում / որոշումը կցվում է/:

Նիստն ավարտվեց օրակարգի սպառմամբ:

Ավագանու անդամներ՝

ԳԱՅԱՆԵ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՀԵ ԴՈԽՈՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԱՌԱՎՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՇԱՀԻՆՅԱՆ

ԽՈՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՏԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Էդիկ Հովսեփյանը _____